Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**. Խաչատուր Խաչիկյան, ՀՀ կառավարության ենթակա միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) նախագահի պարտականությունները կատարող:
2. **Գործուղման վայրը և ժամկետը**. Ֆինլանդիայի Հանրապետություն, Հելսինկի, 2025թ. հունիսի 23-27:
3. **Հրավիրող կողմը**. IDOM Consulting, Engineering, Architecture (այսուհետ՝ IDOM)
4. **Գործուղման նպատակը** մասնակցել Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող INSC/2024/436-156 «Միջուկային անվտանգության կարգավորման համագործակցություն Հայաստանի կարգավորող մարմնի հետ A3.01/20» ծրագրի շրջանակում տեխնիկական հանդիպմանը:
5. **Քննարկված թեմաները**. Ֆինլանդիայի միջուկային և կարգավորող ենթակառուցվածքի ընդհանուր ուրվագծերը, Ֆինլանդիայում միջուկային թափոնների կառավարումը, փոքր մոդուլյար ռեակտորներին վերաբերող ֆիննական կարգավորումները և ընթացիկ իրավիճակը, ինչպես նաև Հայաստանում միջուկային և կարգավորող ենթակառուցվածքը և ռադիոակտիվ թափոնների կառավարման համակարգը:
6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Գործուղման ընթացքում ներկայացվեց Ֆինլանդիայի միջուկային էներգիայի օգտագործման օրենքի և կարգավորող այլ փաստաթղթերի վերանայման/լրամշակման հիմքերն ու նպատակները՝ մասնավորապես՝ կարգավորող փաստաթղթերի կիրարկման հետ կապված դժվարությունները, ազգային օրենսդրության և միջազգային չափանիշների փոփոխությունը, նոր տեխնոլոգիաների ներգրավվումը (փոքր մոդուլյար ռեակտորներ):

   Օրենսդրության վերանայման/լրամշակման նպատակներն են՝ լիցենզավորված անձանց և մարմինների իրավասությունների հստակ սահմանումը, անվտանգության հետ կապված ռիսկերի գնահատումը, նոր տեխնոլոգիաների կիրառման հետ կապված կարգավորումների սահմանումը անվտանգության բարձր մակարդակի պահպանման նպատակով:

   Նշվեց նաև, որ Ֆինլանդիան ունի միջուկային թափոնների կառավարման առաջավոր ծրագիր՝ բոլոր տեսակի թափոնների կառավարման և վերջնական թաղման լուծումներով՝ մասնավորապես՝ ցածր և միջին ակտիվության թափոնները պահվում են միջուկային տեղակայանքների հրապարակներում, ներառյալ դրանց վերջնական թաղումը, իսկ աշխատած վառելիքը (բարձր ակտիվության թափոն) պահեստավորված է տեղակայանքի հրապարակում, և դրա վերջնական թաղման գերեզմանոցը կառուցման փուլում է (կառուցման լիցենզիան տրվել է, շահագործման լիցենզիայի հայտը քննարկվում է կարգավորող մարմնի կողմից):

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հանդիպման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

Խաչատուր Խաչիկյան

04-07-2025